ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Դաստիարակների մասնախմբի նիստի

Նիստը տեղի է ունեցել 2026 թվականի փետրվարի 25-ին:

Նիստին ներկա էին մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում

1. Մասնախմբի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ դաստիարակչական աշխատանքների համակարգող Մ.Հարությունյան)
2. Նախորդ նիստի որոշումների կատարման մասին զեկուցում (զեկուցող՝ Մ.Հարությունյան)
3. Դասարանների միջև ուսուցողական խաղերի և խաղ-վարժանքների իրականացում (զեկուցող՝ Մ.Հարությունյան)
4. Թումանյանական շաբաթ (միջոցառում, պաստառի պատրաստում), գիրք նվիրելու ավանդույթի իրականացում
5. Փոխադարձ դասալսումներ
6. Այլ հարցեր

Լսեցին՝

1. Դաստիարակչական աշխատանքների համակարգող Մ. Հարությունյանը ներկայացրեց փետրվարի 25-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 6 կետից:

Լսեցին՝

2. Տարրական դասարանների միջև ուսուցողական խաղերի և խաղ-վարժանքների իրականացումը շարունակվել և զարգացվել է՝ պահպանելով դրական փորձառությունը և ապահովելով սովորողների ակտիվ ներգրավվածությունը: Թումանյանական օրերին նախորդող շրջանում կազմակերպվել են քննարկումներ դասղեկների/դասվարների հետ, որոնց արդյունքում միջոցառումները համապատասխանեցվել են սովորողների կարիքներին, սահմանվել են պատասխանատուները և հստակեցվել իրականացվող աշխատանքների ժամկետները, որից հետո մեկնարկել են նախատեսված նախաձեռնությունները:

Լսեցին՝

3. Դաստիարակչական աշխատանքների համակարգող ներկայացրեց փետրվար ամսին դասարանների միջև իրականացված ուսուցողական խաղերի արդյունքները: Այս անգամ խաղային ձևաչափով՝ «Ես կարող եմ թեմայի շրջանակներում աշխատանքներին ներգրավվեցին 5-րդ (Ա, Բ, Գ) դասարանների սովորողները, իսկ «Լավ և վատ արարքներ» թեմայի շրջանակներում 7-րդ (Ա, Բ, Գ) դասարանների սովորողները:

Արտահայտվեցին

Տարրական դասարանների դաստիարակները նշեցին, որ մարտ ամսին էլ իրենք կիրականացնեն նմանատիպ նախագծեր:

Լսեցին՝

4. Մասնախմբի համակարգողը ներկայացրեց, որ Թումանյանական օրերի շրջանակում դաստիարակների օգնությամբ սովորողների կողմից պատրաստվել է ,Թումանյանի հերոսներըե պաստառ, իրականացվել է դասարանների միջև գիրք նվիրելու միջոցառում: Բացի այդ կազմակերպվել է նաև Թումանյանի հերոսների մարմնավորմամբ հեքիաթների դրվագների ցուցադրում 3-րդ (Ա, Բ, Գ) դասարանների սովորողների և գրեթե դաստիարակների մեծ մասին ներգրավմամբ:

Լսեցին՝

5. Մասնախմբի ղեկավարը ներկայացրեց, որ մարտի 2-ից կմեկնարկի 2025–2026 ուստարվա երկրորդ կիսամյակի փոխադարձ դասալսումների շրջափուլը, որի նպատակն է նպաստել դաստիարակների մասնագիտական զարգացմանը, փորձի փոխանակմանը և նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Լսեցին՝

6. Մ.Հարությունյանը առաջարկեց, որ բոլոր դաստիարակները նախապատրաստվեն գարնանային շրջանին և համապատասխան ձևավորումներով ու թեմատիկ տարրերով դասասենյակներին հաղորդեն գարնանային մթնոլորտ:

Որոշեցին

1. Հաստատել մասնախմբի փետրվարի 25-ի նիստի օրակարգը:
2. Ընդունել ի գիտություն նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ դաստիարակչական աշխատանքների համակարգողի զեկուցումը և արդյունքը համարել բավարար:
3. Հաշվի առնելով դաստիարակների դրական գնահատականները և արդեն ունեցած փորձառության արդյունավետությունը՝ շարունակել դասարանների հետ համատեղ ուսուցողական խաղերի իրականացումը՝ ապահովելով թեմատիկ բազմազանություն և սովորողների լայն ներգրավվածություն: Մարտ ամսին դասարաններում աշխատանքների իրականացման ժամկետները և պատասխանատուներին հստակեցնել և ներկայացնել համակարգողին:
4. Թումանյանական օրերի շրջանակում իրականացված նախաձեռնությունները գնահատել արդյունավետ և նմանատիպ համագործակցային ու ստեղծագործական ձևաչափերը շարունակել ուսումնական տարվա ընթացքում:
5. Հաստատել 2025–2026 ուստարվա երկրորդ կիսամյակի փոխադարձ դասալսումների շրջափուլի ժամանակացույցը և մեկնարկել աշխատանքները համաձայն հավելված 1-ի:
6. Մարտի առաջին տասնօրյակի ընթացքում իրականացնել դասասենյակների գարնանային ձևավորում՝ ապահովելով գեղագիտական և թեմատիկ համապատասխան միջավայր:

Դաստիարակչական աշխատանքների համակարգող՝ **Մ. Հարությունյան**
Քարտուղար՝ **Ռ. Բաղալյան**

03.03.2026

Հավելված 1
Դաստիարակների մասնախմբի
2025-2026 ուսումնական տարվա
թիվ 7 նիստի արձանագրության

ՓՈԽԱԴԱՐՁ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	**Մանկավարժի ազգանուն, անունը**	**Մանկավարժի ազգանուն, անունը**	**Ամսաթիվ**	**Դասարան**	**Դասաժամ**
1.	Սահակյան Սիրարփի	Ադամյան Շողակաթ	02.03.2026	8-րդ	2
2.	Հարությունյան Հասմիկ	Խաչատրյան Հասմիկ	02.03.2026	5-րդ Բ	3
3.	Սարգսյան Աննա	Առաքելյան Հասմիկ	02.03.2026	3-րդ Ա	4
4.	Պետրոսյան Գայանե	Մովսեսյան Հայկանուշ	03.03.2026	3-րդ Գ	3
5.	Հակոբյան Լիա	Հարությունյան Մարինե	03.03.2026	7-րդ Բ	2
6.	Մանուչարյան Լուսինե	Ամիրյան Լիլթ	03.03.2026	4-րդ Բ	4
7.	Հարությունյան Սյուզաննա	Բեջանյան Գայանե	03.03.2026	3-րդ Բ	5
8.	Խաչատրյան Միլա	Հակոբյան Լիա	04.03.2026	6-րդ Բ	2
9.	Ղահրամանյան Հրաչուհի	Ասատուրովա Վիկտորյա	04.03.2026	6-րդ Բ	3
10.	Ջհանգիրյան Բելլա	Սադոյան Ալևտինա	04.03.2026	9-րդ	4
11.	Ամիրյան Լիլթ	Բաղալյան Ռուզաննա	05.03.2026	4-րդ Գ	2
12.	Խաչատրյան Աղավնի	Կարապետյան Անուշ	05.03.2026	5-րդ Գ	3
13.	Բեջանյան Գայանե	Ջհանգիրյան Բելլա	05.03.2026	2-րդ Բ	4
14.	Ադամյան Շողակաթ	Ղահրամանյան Հրաչուհի	06.03.2026	2-րդ Ա	2
15.	Սադոյան Ալևտինա	Մանուչարյան Լուսինե	06.03.2026	2-րդ Ա	3
16.	Առաքելյան Հասմիկ	Առաքելյան Ժաննա	06.03.2026	4-րդ Ա	4
17.	Խաչատրյան Հասմիկ	Պետրոսյան Գայանե	09.03.2026	2-րդ Գ	2
18.	Մովսեսյան Հայկանուշ	Խաչատրյան Քնարիկ	09.03.2026	2-րդ Գ	3
19.	Կարապետյան Անուշ	Գևորգյան Նարինե	09.03.2026	7-րդ Ա	4
20.	Գևորգյան Նարինե	Հարությունյան Սյուզաննա	10.03.2026	5-րդ Ա	2
21.	Ասատուրովա Վիկտորյա	Դունամալյան Սյուզաննա	10.03.2026	7-րդ Գ	3
22.	Հարությունյան Անժելա	Խաչատրյան Միլա	10.03.2026	4-րդ Ա	4
23.	Դունամալյան Սյուզաննա	Հարությունյան Անժելա	11.03.2026	6-րդ Ա	2
24.	Բաղալյան Ռուզաննա	Սահակյան Սիրարփի	11.03.2026	4-րդ Բ	3
25.	Առաքելյան Ժաննա	Սարգսյան Աննա	11.03.2026	1-ին Բ	4
26.	Հարությունյան Մարինե	Մարտիրոսյան Տաթև	12.03.2026	երկարօրյա խումբ	15:00
27.	Խաչատրյան Քնարիկ	Հարությունյան Հասմիկ	12.03.2026	1-ին Ա	3